Արմատների ուժը

Ամբողջ գիշեր Գարեգինի աչքերին քուն չեկավ: Լուսադեմին, երբ կարճատև նիրհից հետո բացեց կոպերը, դեռ չէր ցրվել գիշերային խռովքը: Աշնանային բարակ անձրևը մեղմ խշշում էր թիթեղյա տանիքին, խլացնելով դրսից եկող ձայները: Արդեն երկրորդ օրն էր անձրևը չէր դադարում, այդ մտքից թեթև սարսուռ անցավ Գարեգինի մարմնով: Տունը ցուրտ էր: Տո՞ւնն էր ցուրտ, թե՞ ծերացող ոսկորների ցավն էր զգացնել տալիս, համենայնդեպս, որոշեց վառել վառարանը: Տունը միանգամից լցվեց սոճու խեժահոտով: Թիթեղյա վառարանը հաճելի տաքություն էր արձակում:

Դուրս եկավ պատշգամբ: Տունը գյուղի ծայրին էր, բարձր բլրի վրա, որտեղից երևում էին հեռուները: Անձրևն արդեն դադարել էր: Նա բացեց պատուհանը, և աշնանային թարմ օդը ներս խուժեց՝ շոյելով դեմքը: Բակի տերևաթափվող վիթխարի թթենու ճյուղերի արանքներից լուսնաքարե գմբեթի նման ցոլացող երկնքի կապույտ լուսաշերտը հեռավոր օրերի կարոտն էր արթնացրել նրա հոգում: Հայացքով շոյեց ծեր թթենուն, մտքով դեմքը սուզեց նրա անձրևաբույր սաղարթների մեջ ու խմեց ճյուղերով սահող առավոտվա մաքուր ցողը, հետո ասաց ինքն իրեն. «Ախր քեզ ո՞նց թողնեմ անտերության մշուշներում: Քանի՞ տարի հարազատ մոր նման օրորել ես ինձ: Իսկ ահա Սենուրը քաղաքից գրում է, որ շուտով գալու է ինձ տանի իր մոտ, այդպես է որոշել: Չէ, դա լինելու բան չի, քաղաքն ինձ այնպես չի տաքացնի, ինչպես դու, ես դա լավ գիտեմ»,— ասես զրուցում էր մտերիմ ընկերոջ հետ:

Պատշգամբի սեղանին Սենուրի նամակն էր՝ բաց ծրարով: Գարեգինը վերցնելով այն, նորից կարդաց, կարդաց բարձրաձայն՝ թող տան պատերն էլ լսեն, պատերին փակցված հարազատների լուսանկարներն էլ, թող լսի ողջ տունը, դրանից երևի ինչ-որ թեթևություն կզգար: Հետո խնամքով ծալելով նամակը, մոտեցավ սնդուկին: Սովորաբար իր համար թանկ բաները նա սնդուկում էր պահում: Ծրարն այնտեղ դնելու համար զգուշորեն բացեց այն: Սնդուկի մեջ պահվող կանաչ բրդե գլխաշորից տարածվեց կնոջ՝ Արփենյայի մազերի բույրը: Գարեգինը շնչեց հարազատ այդ բույրը և վշտից սեղմվեց սիրտը: Ծերունին ինքնազսպման ուժով ջանում էր իր մեջ խեղդել հեծկլտոցը, և դա դժվարությամբ էր ստացվում: Արցունքի երկու կաթիլ սահելով, ընկան բրդե գլխաշորը շոյող նրա կոշտացած ձեռքերին:

... Երկու ամիս առաջ թաղեցին կնոջը՝ յոթ զավակների մորը, հանկարծամահ էր եղել: Ինքը տանը չէր, գնացել էր անտառ խոտ հնձելու: Գարեգինն ամեն անգամ խոտը բերում էր անտառի բացատներից: Կեսօրից անց էր, երբ կնոջ մահվան շամփրող բոթը հասավ իրեն, և կորստի ահավոր ցավը միանգամից նրան տապալեց բացատի հնձած խոտերին:

Հիշեց Արփենյայի թաղման օրը: Հիշեց դագաղը գերեզմանափոսն իջեցնելու ահավոր պահը, և ամբողջովին ցնցվեց մարմինը, ծնկների մեջ թուլություն զգաց ու նա կյանքում առաջին անգամ ճաշակեց որբության ամբողջ դառնությունը: Հետո ելավ տեղից, հագավ բամբակե բանկոնը, դուրս եկավ բակ, ծխախոտ վառեց, ծուխն ագահորեն ներս քաշելով, նստեց թթենու տակ ընկած կոճղի վրա և հայացքը դարձրեց դեպի լեռները մագլցող անտառների կողմը: Մշուշը ետ էր քաշվել, և հստակորեն երևում էին կապույտ լեռները: Արևը ծիածաններ էր վառել անտառների ոսկեգույն կատարներին, ուր տեղ-տեղ դեռ ծխում էին ճերմակ ամպերի բարակ քուլաները:

Ծեր այգեպանը կամացուկ ետ քաշեց այգու դռան մղլակը ու ներս մտավ: Գյուղից ներքև փռված այգիներում վառվող խարույկների ծուխը խառնվելով աշնանային երկնքին, հալվում, անէանում էր կապույտներում: Գարեգինը նայեց ցողաթաթախ խնձորենիներին, որ իր ձեռքերի աճեցրածն են, ու մի տեսակ խղճահարություն զգաց ծառերի նկատմամբ, երբ պատկերացրեց, որ ինքն այստեղ չէ, տեղափոխվել է քաղաք, անտեր թողնելով նաև այգին: Նա կռացավ, մի բուռ հող վերցրեց, տրորեց կոշտացած ափերի մեջ ու շնչեց նրա տամուկ բույրը... Գոմից եկող կովի մնչոցը նրան սթափեցրեց մտքերից: Ծառերի տակից նախանցյալ օրը քաղհանած խոտը հավաքելով, դուրս եկավ այգուց, ցցեց մղլակը և գնաց դեպի գոմը:

* * *

Իրար հաջորդելով, աննկատելիորեն անցնում էին աշնանային օրերը: Երկար այդ գիշերները Գարեգինը վատ էր քնում: Արթուն ժամերին ավելի սուր էր զգում, որ մոտը ոչ ոք չկա և ինքը մենակ է: Նման պահերին վերապրում էր իր կյանքի անցած տարիները:

Գիշերը, արթուն ժամերին, չգիտես ինչու, հաճախ էր միտքը գալիս գյուղից վերև, անտառի բարձունքի հսկա կաղնին: Գիտեր, որ մի քանի ամիս առաջ կայծակը ծառին խփել էր, և ծառը շանթի զոհ էր դարձել: Ու հիմա վճռեց գնալ իր աչքերով տեսնել շանթահար կաղնին:

Գնում էր դեղնականաչ խոտերով ծածկված դաշտի միջով: Գարեգինը գիտի այդ վայրերում աճող բոլոր ծաղիկների անունները: Դաշտը աղոտ լույս էր արձակում: Անձրևի հոտ կար օդի մեջ: Շուրջը խնկում էր վաղուցվա հնձած խոտի ու անկի բուրումներով: Ի՞նչ ուժ ունի բնական գեղեցկությունը, որ մարդուն դարձնում է ճամփորդ...

Գարեգինը անցավ փոքրիկ գետակը ու մտավ անտառ: Բարձր ու խիտ ծառերը խշշում էին թեթև քամուց: Ոսկեփայլ սաղարթների վրա ցոլցլում էր թափանցող արևի լույսը:

Նա գնում էր անտառով: Գիտեր ամեն ծառ ու թուփ, ամեն բացատ ու կոճղ: Որքա՞ն է նստել ահա այս քարի վրա ու ծխել, այստեղ ամեն ինչ հարազատ էր նրան: Քանի՞ տարի է՝ ծանոթ էր այս անտառներին, բայց ամեն անգամ երեխայի նման հրճվում է դրանց հրաշալիքներով: Այս վայրերով՝ ուր էլ գնար, իր տերությունն է, կարոտների իր արևոտ աշխարհը:

Խոտով ծածկված կածանը նեղացավ ու կորավ խիտ թփուտներում: Գարեգինը բռնելով բարձունքի ուղղությունը, արագացրեց քայլերը: Այստեղ համեմատաբար նոսր ծառերի ճյուղերի արանքներից ծիկրակին տվող արևի սկավառակից իմացավ, որ մոտավորապես կեսօր է: Նստեց աղբյուրի մոտ գտնվող ծանոթ ժայռաբեկորին, պայուսակից հանեց խաշած կարտոֆիլը, հացն ու պանիրը, սկսեց ուտել: Մոշի տերևներից բաժակ սարքեց ու նրանով խմեց աղբյուրի ջրից. ինքն է փորել, բացել աղբյուրի կապույտ երակը, որից ասես լույս է բխում:

Հոգնել էր արդեն, երբ հասավ վիթխարի բարձունքի գագաթը: Հին այգեգործի լցված հայացքով նայեց դեպի հեռուների ձյունապատ լեռները: Նրանց լանջերին փռված գյուղեր էին, իսկ ցածում արդեն հովիտների դեղնավուն գորգն էր:

Կածանով մի փոքր իջավ ցած: Ահա այստեղ էր կանգնած կաղնին: Հիմա ժայռերի մեջ ածխացած արմատներն են միայն մնացել, ցավով օրորեց ալեհեր գլուխը:

Շրջապատի այրված, մոխրագույն հողից նա ամայության շունչը զգաց, հետո տրտում ժպտաց ինքն իրեն.

«Արցախյան հողի արմատ է, չի մահանա»:

Հեռվում, բլրալանջին ծվարած հայրենի գյուղի սքանչելի պատկերը շոյեց նրա հոգին: Անտառի բարձունքից հստակորեն երևում էր գյուղը՝ աշնան գույների մեջ: Ահա իրենց տունը, քիչ ներքև հանրային այգիներն են փռված: Ահա մեծ հայրենական պատերազմում զոհված մարտիկների հիշատակին կառուցված հուշակոթողը, գերեզմանատունը, այն ճանապարհը, որը տանում է դեպի կապույտ գետակը: Վերջին երկու ամսում առաջին անգամ վայելեց հոգեկան մեղմ անդորրը. «Ի՞նչ ասեմ քեզ, կյանք...»: Ծխեց: Մթնշաղն արդեն ընկել էր, երբ նա գյուղ եկավ:

... Գարեգինը դուրս եկավ բանջարանոցից, ձեռքի բահը հենեց բակի թթենուն և առանց տուն մտնելու քայլերն ուղղեց դեպի գերեզմանատուն տանող ճանապարհը: Գյուղի խանութի մոտ տեսավ կոլտնտեսության բրիգադավարին:

— Ասում են՝ տեղափոխվում ես քաղաք,— ասաց բրիգադավարը:

— Է՜, ասում են, էլի՜...

... Ծնկի էր իջել կնոջ գերեզմանի առջև ու նայում էր հեռվում մանուշակագույն հորիզոնը երիզող ձյունաճերմակ սարերին, ոսկե մշուշների շղարշ հագած անտառներին: Մտորումների մեջ էր:

«Արփենյա, սիրելիս, ի՞նչ դժվար է առանց քեզ: Ես միշտ էլ հիշում եմ քո ձայնը, ընտանիքի սրբությանը հավատարիմ մնացած քո ձեռքերը, որ հոգնել չգիտեին: Հիշո՞ւմ ես, մեկ-մեկ խոսում էիր վրաս, որ ծխելը թողնեմ, իմ մասին էիր մտածում, իսկ հիմի... Է՜, ինչ ասեմ... մենակ եմ: Երեխեքից ոչ մեկը չմնաց գյուղում: Սենուրը նամակ է գրել, որ շուտով գալու է ինձ տանի, թուրքը հենց դա է ուզում... Չէ, գնացողը չեմ, կապրեմ այս քերծերի մեջ կռիվ տալով, բայց չեմ գնա: Արփենյա, հոգի՛ս, քանի շունչ կա բերանումս, կվառվի օջախիդ կրակը: Ներող եղիր, այսուհետև շուտ-շուտ կգամ...»:

Գարեգինը երեխայի նման լաց եղավ, և ոչ ոք չտեսավ դա: Հետո ոտքի ելավ, նայեց գյուղի վրա քնքշորեն կախված կապույտ երկնակամարին ու դանդաղ քայլեց դեպի տուն: Աշնանային օրն արդեն ցրտում էր:

ՍԵՐԺ ԱՌԱՔԵԼՅԱՆ